



Քոբուլետիի քաղաքապետարանի (Վրաստան) և Ախթալա քաղաքի
(Հայաստան) համագործակցության

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

Քոբուլետիի քաղաքապետարանի և Ախթալա քաղաքի միջև
հարաբերությունների խորացման և ընդլայնման նպատակով հայտնում
ենք մեր պատրաստակամությունը և շահագրգռվածությունը
համագործակցություն հաստատելու մասին մեր ժողովուրդների միջև

Պայմանագիրը նախատեսում է՝

1. Համագործակցության ակտիվացում տուրիզմի, սպորտի, մշակույթի, կրթության և առողջապահության ոլորտներում:
2. Փոխշահավետ տնտեսական ծրագրերի մշակում և իրականացում, համատեղ ձեռնարկությունների ստեղծում՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:
3. Տեղեկատվության և փորձի փոխանակում:
4. Տարբեր կազմակերպությունների միջև համագործակցության նպաստավոր պայմանների ստեղծում:
5. Համագործակցություն Չակվի քաղաքային տիպի սարահարթի հետ՝ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Նշված համագործակցությունը նպաստելու է վրաց և հայ ժողովուրդների եղբայրական դարավոր հարաբերությունների զարգացմանը:

Պայմանագիրը կնքված է երկու լեզուներով՝ հայերեն և ռուսերեն, որոնք հավասարազոր են:

Պայմանագիրը կնքված է 2010 թվականի մարտի 5-ին Քոբուլետի քաղաքում և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՔՈԲՈՒԼԵՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ԱԽԹԱԼԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Վ. ՏԱՎԱՐՏԿԻԼԱՉԵ

Հ. ԽԱՉԻԿՅԱՆ